ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/49

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ս. Աղումանյանի (լիազորագիր՝ տրված 02.03.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.02.2021թ. թիվ 26/26/2406-2020 գրությամբ «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության 18.02.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/760-2021 գրության հիման վրա 19.02.2021թ. թիվ 26/26/2406-2020 գրությամբ նախաձեռնել է «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/49 ընթացակարգի շրջանակներում 02.03.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընկերությունը «ՀՀ ՊՆ -ԳՀԱՊՁԲ-21-10/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ճանաչվել է ընտրված մասնակից: Սակայն պայմանագրի կնքման փուլում Ընկերությունը հրաժարվել է պայմանագիր ստորագրելուց, քանի որ, երբ Պատվիրատուի կողմից ուղարկվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, առաջարկվող ապրանքի գինը թանկացել է մոտ 40%-ով:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.02.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/760-2021 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման և գնահատման արդյունքում «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ն՝ հրավերի 57-րդ չափաբաժնի մասով, ճանաչվել է ընտրված մասնակից:

Սահմանված կարգով «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ին www.armeps.am համակարգի միջոցով շնորհվել է պայմանագիրը՝ կից ներկայացնելով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, սակայն «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում չի ընդունել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/3» ծածկագրով ընթացակարգի համար ուղարկված պայմանագրի շնորհումը և չի ստորագրել պայմանագիրը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ներկայացնում է «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով պահանջվող փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/49 ընթացակարգի շրջանակներում 02.03.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/49 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/49 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.02.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ 29.01.2021թ.-ին սահմանված կարգով «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ին www.armeps.am համակարգի միջոցով շնորհվել է պայմանագիրը՝ կից ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, սակայն Ընկերությունը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում /10 աշխատանքային օր/, չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները, ուստի զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.02.2021թ. թիվ 26/26/2406-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 18.02.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/760-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի,

գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,</u>

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն

օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման

ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ն Ընթացակարգի 57-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, և որոշվել է վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 29.01.2021թ. Armeps էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.02.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ 29.01.2021թ.-ին սահմանված կարգով «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ին www.armeps.am համակարգի միջոցով շնորհվել է պայմանագիրը՝ կից ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, սակայն Ընկերությունը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում /10 աշխատանքային օր/, չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները, ուստի զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ ՍՑ-ՆԳ-2021/49 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 02.03.2021թ. հրավիրված նիստի ընթացքում «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ն հայտնել է, որ պայմանագրի կնքման փուլում Ընկերությունը հրաժարվել է պայմանագիր ստորագրելուց, քանի որ, երբ Պատվիրատուի կողմից ուղարկվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, առաջարկվող ապրանքի գինը թանկացել է մոտ 40%-ով:

Այսպես, Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 9-րդ կետի 9.3-րդ, 9.4-րդ և 9.5-րդ ենթակետերի համաձայն՝

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 ***<u>Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:</u>*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>***

Այսպիսով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է հստակ ժամկետ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու համար, որը չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու</u>***

<u>իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:</u>

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***<u>ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:</u>***

Այսպիսով՝ ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, դրանք համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ գտնում եմ, որ «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ն հրաժարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/3» ծածկագրով պայմանագիրը կնքելուց և թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը, որի հետևանքով զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.02.2021թ. թիվ 26/26/2406-2020 գրությամբ «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Միեր Սողոմոնյան» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**